

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

*МАТЕРИАЛЫ ЮБИЛЕЙНОЙ НАУЧНОЙ СЕССИИ,
ПОСВЯЩЕННОЙ 95-ЛЕТИЮ ОСНОВАНИЯ ЕГУ*

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

*MATERIALS OF THE SCIENTIFIC SESSION
DEDICATED TO THE 95TH ANNIVERSARY OF YSU*

1.5 (8)

Общественные науки - Social sciences

(Юриспруденция и политология) - (Jurisprudence and Political science)

ЕРЕВАН - YEREVAN

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS

2015

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

*ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐԿԱԾ
ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ*

1.5 (8)

*Հասարակական գիտություններ
(Իրավագիտություն և քաղաքագիտություն)*

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԿՉՈՒԹՅՈՒՆ

2015

Հրատարակվում է
ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издается по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

ի. գ. դ., պրոֆ. Ա. Գաբուզյան
ի. գ. դ., պրոֆ. Ս. Դիլբանդյան
ի. գ. դ., պրոֆ. Ա. Վաղարշյան
բ. գ. դ., պրոֆ. Գ. Զեռյան
ի. գ. թ., դոց. Լ. Մելիքջանյան
ի. գ. թ., դոց. Գ. Բեքմեզյան
ս. գ. թ., դոց. Մ. Վարդազարյան

Редакционная коллегия:

д. ю. н., проф. А. Габузян
д. ю. н., проф. С. Дилбандян
д. ю. н., проф. А. Вагаршян
д. п. н., проф. Г. Керян
к. ю. н., доц. Л. Меликджанян
к. ю. н., доц. Г. Бекмезян
к. и. н., доц. М. Вардазарян

Editorial Board

DSc, prof. A. Gabuzyan
DSc, prof. S. Dilbandyan
DSc, prof. A. Vagharshyan
DSc, prof. G. Keryan
PhD, associate prof. L. Melikjanyan
PhD, associate prof. G. Bekmezyan
PhD, associate prof. M. Vardazaryan

Հրատ. պատասխանատու խմբագիր՝ ***Մ. Մալխասյան***

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55-55-70, publishing@ysu.am
Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական
գիտական ընկերություն
Հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 1, (+37460) 71-01-94, ssspуб@ysu.am, sss@ysu.am
ԵՊՀ ՌԻԳԸ հրատարակումների կայք՝ ssspуб.yсу.am

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՓՈԽՆԱՏՈՒՅՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՆԵՐՈՒՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ**

2013 թ. նոյեմբերի 5-ին ՀՀ Սահմանադրական դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչեց ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, քանի որ այն բարոյական վնասը չի դիտում որպես վնասի տարատեսակ և չի ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելափակելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը ու խոչընդոտելով ՀՀ միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը: Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով, որ պահանջվում է բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտի համակարգված օրենսդրական կանոնակարգում, որը կներառի «բարոյական վնաս» հասկացության, այդ ինստիտուտի կիրառման շրջանակների և հիմքերի, բարոյական վնասը հաշվելու հստակ կարգի ու այլ հարցերի վերաբերյալ դրույթներ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանեց 2014 թ. հոկտեմբերի 1-ը: Այսպիսով, Սահմանադրական դատարանի որոշմամբ հիմք դրվեց առաջիկայում քաղաքացիական օրենսդրությունում բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտի ներդրմանը: Հաշվի առնելով բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտը վաղուց արդեն կիրառող երկրների օրենսդրությունը, իրավական փորձն ու պրակտիկան՝ պետք է նշել, որ տվյալ ինստիտուտին առնչվող օրենսդրության, ինստիտուտի ներդրման և կիրառման ոլորտում առաջացել և զրեթե ակունծելի են մնացել մի շարք հարցեր, որոնք մեր օրենսդրի կողմից ոչ ճիշտ կանխատեսման և դրանք լուծելու ոչ հստակ մեխանիզմների պատճառով կարող են խնդիրներ առաջացնել նաև մեր իրավական համակարգի համար, և քաղաքացիական օրենսդրությունն իր օրենսդրական բացերի շարքում կավելացնի նաև բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտը:

Բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտի սկզբնական խնդիրներից մեկը, որին պետք է ուշադրություն դարձնել, կապված է «բարոյական վնաս» հասկացության հետ: Խնդրի կարևորությունն այն է, որ պետք է ճիշտ և հնարավորինս հստակ սահմանել, թե ինչ է բարոյական վնասը՝ դրանով իսկ ամրագրելով բարոյական վնասի փոխհատուցման հիմքերը: Բարոյական վնասը ՌԴ քաղաքացիական օրենսգրքում բնութագրվում է որպես «Ֆիզիկական կամ բարոյական տառապանք» (հոդված 151): Ինչպես արտահայտված է «Բարոյական վնասի փոխհատուցման վերաբերյալ օրենսդրության կիրառման հարցերի մասին» ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 20.12.1994 թ. որոշման մեջ, բարոյական վնասը կարող է հանդես գալ որպես անձի բարոյական տառապանք՝ կապված իր հարազատներին կորցնելու, հասարակական ակտիվ կյանքով զբաղվելու անհնարինության, աշխատանքը կորցնելու, ընտանեկան, բժշկական գաղտնիքի բացահայտման, պատիվն ու արժանապատվությունն արատավորող, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվության տարածման, հաշ-

մութություն կամ առողջությանն այլ կերպ վնաս պատճառելու հետ կապված ֆիզիկական ցավի, դրա կամ բարոյական տառապանքների արդյունքում հիվանդության ձեռքբերման հետ: Ընդ որում, այդ տառապանքները կարող են առաջանալ անձի ոչ գույքային իրավունքների և բարիքների, ինչպես նաև գույքային իրավունքների ոտնահարման արդյունքում: Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքում ոչ թե հատուկ նշված է բարոյական վնաս արտահայտությունը, այլ խոսվում է գույքային չհամարվող վնասի դրամական հատուցման մասին: Այս ոչ հստակ կարգավորումը հղի է լուրջ հետևանքներով, որովհետև գերմանական դատական պրակտիկայում արմատավորվել է *minima non curat praetor*՝ «դատավորը հոգ չի տանում մանրուքների մասին» սկզբունքը, ըստ որի՝ որոշակի դեպքերում դատարանը մերժում է բարոյական վնասի փոխհատուցման պահանջը՝ համարելով դրանք ընդհանրապես աննշան վնասներ¹: Աննշանության չափանիշի բացակայությունն էլ դժվարություններ է առաջացնում եական և աննշան վնասների տարբերակման հարցերում, օրինակ՝ արդյոք ուսուցչի ապտակների համար անկարգապահ աշակերտի մոտ առաջանում է վնասի փոխհատուցման պահանջի իրավունք: Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքը որևէ տարբերակում չի դնում գույքային և ոչ գույքային վնասների միջև: Վնասը հիշատակվում է որպես ընդհանուր կատեգորիա: Չնայած դրան՝ Ֆրանսիայի քաղաքացիական իրավունքի տեսության մեջ և դատական պրակտիկայում առկա է նման տարբերակում: Ֆրանսիական դատական պրակտիկայում բարոյական վնաս հասկացությունը դիտվում է ուղղակի որպես ոչ գույքային իրավունքների ու բարիքների ոտնահարում, այսինքն՝ ֆրանսիական մոդելը բարոյական վնասի հատուցումն ուղղակիորեն չի կապում տուժողի մոտ տառապանքի, հոգեբանական կամ ֆիզիկական վնասի առաջացման հետ, ինչը չի արտացոլում բարոյական վնասի էությունը: «Բարոյական վնաս» հասկացության իմաստաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հանդես է գալիս որպես ոչ միայն իրավունքների ոտնահարում, այլ նաև դրանց արդյունքում առաջացած վնաս և տառապանք, ուստի կարծում ենք՝ Ֆրանսիայի քաղաքացիական իրավունքը թերի է արտահայտում հասկացության էությունը: Ինչ վերաբերում է անգլո-սաքսոնական իրավական համակարգին, պետք է նշել, որ այստեղ նույնպես բարոյական վնասի հասկացության ու տերմինաբանության վերաբերյալ միասնական որոշում գոյություն չունի: Անգլիայում ու ԱՄՆ-ում տարածված է «հոգեկան վնաս» եզրույթը՝ իր տարբեր դրսևորումներով՝ հոգեբանական վնաս, հոգեբուժական վնաս, նյարդային շոկ², նյարդային ցնցում, հասարակ շոկ, հասարակ ցնցում և այլն: Այսպիսի մոտեցումը, որ մեծապես կապված է նախադեպային իրավունքի կազուալ բնույթի հետ, չի համապատասխանում մայրցամաքային, մասնավորապես՝ մեր իրավական համակարգին: Այն կարող է գործել անգլո-սաքսոնական նախադեպային իրավունքի շրջանակներում:

Պետք է օրենսդրորեն ամրագրել բարոյական վնասները և այն գործողությունները (անգործության տեսակները) կամ դրանց սահմանները, որոնք կարող են առաջացնել բարոյական վնասի փոխհատուցման պահանջ, այսինքն՝ պետք է տալ բարոյական վնաս հասկացության այսպիսի սահմանում. բարոյական վնաս է համարվում ֆիզիկական անձին պատճառված բարոյական տառապանքը, այդ թվում՝ վախը, ամոթը, ստորացումը կամ հոգեբանական իմաստով այլ անբարենպաստ վիճակը՝ կապված պատվի և արժանապատվության ոտնահարման, հարազատներին կորցնելու, հասարակական ակտիվ կյանքով զբաղվելու անհնարինության, աշխատանքը կորցնելու, ընտա-

¹ Տե՛ս Эрделевский А., Компенсация морального вреда: анализ и комментарий законодательства и судебной практики, 3-е изд., Москва, 2007, էջ 12:

² Nervous shock. Նյարդային շոկի դիմաց փոխհատուցման հետ կապված դատական գործի տիպիկ օրինակ է Alcock v Chief Constable of South Yorkshire Police [1992] 1 AC 310 գործը:

նեկան, բժշկական ու անձնական այլ գաղտնիքի բացահայտման և գույքային, անձնական ոչ գույքային իրավունքների այլ կերպ ոտնահարման, ինչպես նաև անձին ֆիզիկական, օրգանական վնաս պատճառելու արդյունքում առաջացած ֆիզիկական տառապանքը¹: Այստեղ հարկ է նշել, որ ՌԴ քաղաքացիական օրենսգրքով գույքային իրավունքների խախտման արդյունքում առաջացած բարոյական վնասը հատուցվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում: Խոսքը վերաբերում է սպառողների իրավունքների, քաղաքացիների աշխատանքային իրավունքների և զինծառայության հետ կապված գույքային իրավունքների ոտնահարման դեպքերին²: Մնացած բոլոր դեպքերում օրենսգիրքը թույլ չի տալիս պահանջել գույքային իրավունքների խախտման արդյունքում պատճառված բարոյական վնասի հատուցում: Սա արդարացի մոտեցում չէ. շատ դեպքերում գույքային վնաս պատճառելու արդյունքում տուժողի մոտ ավելի լուրջ տառապանքներ ու ապրումներ են առաջանում, քան ոչ գույքային բարիքների ոտնահարման ժամանակ: Օրինակ, եթե մեկի՝ նոր վերանորոգված բնակարանը հարևանի անփութության պատճառով ջրով է լցվում՝ պատճառելով ոչ միայն նյութական, այլև՝ բարոյական վնաս, դատարանը մերժում է բարոյական վնասի հատուցման պահանջը: Բայց չէ՞ որ շատ դեպքերում անձի գույքին պատճառված թելուզ ոչ մեծ չափերի վնասը կարող է լուրջ տառապանքներ, ցավ, անհանգստություն առաջացնել անձի մոտ, և գույքին պատճառված վնասի փոխհատուցումը միայն բավական չլինի այդ դեպքում անձի իրավունքների պաշտպանության համար: Այսինքն, բարոյական վնասի հատուցման ինստիտուտը կդառնա չկիրառվող, ձևական գործիք, ուստի պետք է գերծ մնալ ՌԴ օրենսգրքի նման կարգավորումից, և նախատեսել բարոյական վնասի փոխհատուցման պահանջի իրավունք գույքային իրավունքների խախտման բոլոր դեպքերում: Գուցե ՌԴ օրենսդրությունը գույքային վնասների արդյունքում պատճառված բարոյական վնասի փոխհատուցման դեպքերը նախատեսում է միայն օրենքով այն նպատակով, որ դատարաններին ազատի բարոյական վնասի անհարկի և անհիմն պահանջներից, սակայն դատավարական հստակ մեխանիզմներով կարելի է կանխել նման դեպքերը:

Ինչպես նշվեց, բարոյական վնասը ֆիզիկական անձին պատճառված վնասն է, որովհետև բարոյական վնասի հատուցման սուբյեկտների հիմնախնդիրը նույնպես շատ վեճերի և հակասությունների տեղիք է տալիս: Հարց է առաջանում՝ կարո՞ղ է ընդհանրապես իրավաբանական անձը կրել բարոյական վնասներ և պահանջել դրանց փոխհատուցում: ՌԴ նախկին քաղաքացիական օրենսգրքով բարոյական վնասի փոխհատուցման սուբյեկտ էին ճանաչվում քաղաքացիները՝ ֆիզիկական անձինք: Մինևույն ժամանակ օրենսգիրքը ամրագրում էր, որ քաղաքացին իր գործարար համբավն արատավորվելու դեպքում կարող է պահանջել նաև բարոյական վնասի հատուցում: Այս կանոնները տարածվում էին նաև իրավաբանական անձանց վրա, այսինքն՝ առկա էր ակնհայտ հակասություն՝ մի կողմից բարոյական վնասի փոխհատուցման սուբյեկտ ճանաչելով քաղաքացիներին, մյուս կողմից՝ դրա պահանջի իրավունք նախատեսելով իրավաբանական անձանց համար: Սակայն ՌԴ քաղաքացիական նոր օրենսգրքում (հոդված 152) հարցին տրվել է լուծում, և իրավաբանական անձինք վերջնականապես զրկվել են բարոյական վնասի փոխհատուցման իրավունքից:

¹ Ֆիզիկական տառապանք ասելով՝ հասկացվում է ցավը, այդ թվում՝ շոկը, նևրոզը, մարմնի կազմվածքի և դեմքի այլանդակումը (հատկապես՝ կանանց մոտ), անհարմարությունները վնաս պատճառելուց հետո, օրինակ՝ անձը ավելի շուտ է հոգնում աշխատանքի ընթացքում, քան մինչև իրեն վնաս պատճառելը (տե՛ս <http://uristy.ucoz.ru/publ/2-1-0-525>):

² Сгн Дмитриева О., Некоторые проблемы института компенсации морального вреда, «Вестник Воронежского института МВД России», № 1, 2010, էջ 60-63:

Մեր օրենսդրության պարագայում նման խնդիր չունենալու համար անհրաժեշտ է հենց սկզբից որոշել իրավաբանական անձանց հնարավորությունները բարոյական վնասի փոխհատուցման հարցում: Կան կարծիքներ, որ իրավաբանական անձանց համար օրենքով պետք է հստակ ամրագրվի պաշտպանության այնպիսի եղանակ, ինչպիսին է բարոյական վնասի փոխհատուցումը՝ ցանկացած ոչ գույքային իրավունքի ոտնահարման դեպքում¹: Բարոյական վնասի փոխհատուցման իրավահարաբերությունները կարգավորող նորմերի կիրառումը պետք է համապատասխանի իրավահավասարության սկզբունքին (այսինքն՝ հավասարապես նախատեսված լինի և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձանց համար), և այստեղից էլ բխում է դրանց անհավասարաչափ կիրառման անթույլատրելիությունը: Հակառակ դեպքում կիսաթարվի իրավահավասարության ֆունդամենտալ սահմանադրական սկզբունքը՝ որպես իրավունքների իրականացման անհրաժեշտ պայման²: Որոշ հեղինակներ էլ գտնում են, որ բարոյական վնասի փոխհատուցման իրավունք ունեն նաև իրավաբանական անձինք, սակայն իրավաբանական անձը ոչ թե բարոյական և ֆիզիկական տառապանք է կրում, այլ խոսքն ուղղակի գնում է գործարար համբավի, անվան ոտնահարման մասին, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ կազմակերպության գործունեության վրա: Այլ կերպ ասած՝ իրավաբանական անձանց դեպքում բարոյական վնաս ասելով՝ պետք է հասկանալ կազմակերպության ոչ գույքային իրավունքների ոտնահարման որոշ բացասական հետևանքներ՝ ուղղակիորեն կապված տնտեսական ոլորտի խաթարման հետ³: Կա կարծիք, որ իրավաբանական անձը պետք է կարողանա բարոյական վնասի հատուցում պահանջել նաև պարտավորությունների խախտման, առևտրային գաղտնիքի բացահայտման, ապրանքանիշի ապօրինի օգտագործման և այլ դեպքերում⁴: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր «Comingersol S. A. ընդդեմ Պորտուգալիայի» գործով⁵ եկավ այն համոզման, որ դատարանը չի կարող բացառել առևտրային կազմակերպության իրավունքը՝ պահանջելու իր ոչ նյութական վնասների հատուցումը, որոնք կարող են հանդես գալ որպես կազմակերպության ղեկավարման գործարար համբավի ոտնահարում և անհարմարություն: Իրականում պետք է նշել, որ կազմակերպության ղեկավարությանը պատճառված անհանգստությունը, կազմակերպության ղեկավարման համար առաջացած խոչընդոտները լավագույն դեպքում պետք է դիտել որպես բարոյական վնաս՝ ուղղակի հասցված հենց ղեկավար մարմիններին՝ ֆիզիկական անձանց, բայց ոչ կազմակերպությանը: Առևտրային գաղտնիքի բացահայտման, ապրանքանիշի ապօրինի օգտագործման և այլ ոչ գույքային իրավունքների ոտնահարման դեպքերն առնչվում են հենց կազմակերպության գործարար համբավի ոտնահարմանը, որը քաղաքացիաիրավական այլ ինստիտուտ է: Այսինքն, իրավաբանական անձանց համար բարոյական վնասի փոխհատուցում չպետք է նախատեսվի, հակառակ դեպքում՝ տեղի կունենա քաղաքացիական իրավունքի համակարգի երկու ինքնուրույն տարրերի՝ բարոյական վնասի հատուցման և պատվի, արժանապատվության ու գործարար համբավի պաշտպանության ինստիտուտների միաձուլում, չնայած որ դրանցից յուրաքանչյուրն ունի իր պաշտպանության առարկան ու օբյեկտը: Ելնելով բարոյական վնաս հասկացության բուն իմաս-

¹ Տե՛ս **Малеина М.**, Нематериальные блага и перспективы их развития, “Закон”, 1995, № 10, էջ 103; Компенсация за немущественный вред, “Вестник Верховного Суда СССР”, 1991, № 5, էջ 29:

² Տե՛ս “Выступление Председателя Конституционного Суда РФ В. Д. Зорькина (Редакционный материал)”, “Российский судья”, 2009, № 1, էջ 17, 18:

³ Տե՛ս **Смирнов В.** и др., Обсуждение Основ гражданского законодательства, “Круглый стол” журнала “Правоведение”, ч. 2, 1992, № 2, էջ 104 -110:

⁴ Տե՛ս **Шичанин А.**, Проблемы становления и перспективы развития института возмещения морального вреда, автореф. дисс. к. ю. н., Москва, 1995, էջ 7:

⁵ Տե՛ս <http://echr.ketse.com/doc/35382.97-en-20000406/view/>:

տից, այն է՝ բարոյական կամ ֆիզիկական տառապանք, պետք է նշել, որ բարոյական տառապանք կարող է կրել միայն այն սուբյեկտը, ով ունի հոգեկան ներաշխարհ, իսկ ֆիզիկական տառապանք՝ ով ունի մարմին: Անհեթեթ է թվում այն հանգամանքը, որ իրավաբանական անձը, լինելով արհեստածին սուբյեկտ, իրավական ֆիզիցիա, կարող է ընդհանրապես կրել այդ տառապանքները և պահանջել բարոյական վնասի փոխհատուցում: Նույնպիսի կարծիք արտահայտված է շատ գիտնականների մոտ: Այսպես՝ Վ. Վիտրյանսկին գտնում է, որ ընդհանուր իրավասության դատարանների կողմից իրավաբանական անձանց օգտին բարոյական վնասի փոխհատուցման պահանջները բավարարելու պրակտիկան ուղղակի թյուրիմացություն է¹ (խոսքը, իհարկե, մինչև քաղաքացիական օրենսգրքում վերոնշյալ փոփոխությունները ձևավորված պրակտիկայի մասին է): Գործնականում նման եզրահանգման է եկել նաև ՌԴ Գերագույն արբիտրաժային դատարանը՝ նշելով, որ, քանի որ ըստ օրենքի բարոյական վնասի հատուցման չափը որոշելիս հաշվի են առնվում բարոյական և ֆիզիկական տառապանքները՝ կապված անձի անհատական հատկանիշների հետ, և քանի որ իրավաբանական անձը չի կարող կրել այդ տառապանքները, նրան հնարավոր չէ բարոյական վնաս պատճառել²: Նույնիսկ այդ դեպքում ինչպե՞ս պետք է որոշել բարոյական վնասի չափը, ի՞նչ հանգամանքներ պետք է հաշվի առնել: Այսպիսով, կարող ենք նշել, որ իրականում անհրաժեշտ է բացառել իրավաբանական անձանց՝ բարոյական վնասի փոխհատուցման հնարավորությունն ու այն օրենսդրորեն ամրագրելը՝ հատկապես հաշվի առնելով այն, որ դա կնույնացվի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության ինստիտուտի հետ, որը որոշակի դեպքերում կհանգեցնի օրենքում հարցի կրկնակի կարգավորման՝ անհարկի հակասությունների տեղիք տալով: Այսինքն, այս հարցում պետք է մնալ նույն համոզման՝ բարոյական վնասի փոխհատուցման սուբյեկտ կարող են լինել միայն քաղաքացիները՝ ֆիզիկական անձինք: Իսկ ինչ վերաբերում է տվյալ դեպքում իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավահավասարության խախտմանը, ապա քաղաքացիական իրավունքը սահմանում է իրավաբանական անձանց նպատակային (հատուկ) իրավունակությունը, և իրավաբանական անձն օբյեկտիվորեն չի կարող կրել այնպիսի իրավունքներ, որոնց կրողը կարող են լինել միայն քաղաքացիները և հակառակը³:

Հաջորդ հարցը վերաբերում է լրիվ գործունակ անձին պատճառված բարոյական վնասի, մասնավորապես՝ պատվի և արժանապատվության ոտնահարման դեպքում հատուցման պահանջը երրորդ անձանց կողմից ներկայացնելուն⁴: Օրինակ, մի դեպքում դա կարող է վերաբերել մահացած անձին նախկինում պատճառված բարոյական վնասին, երբ դա պահանջում են փոխհատուցել մահացածի ընտանիքի անդամները, մյուս դեպքում էլ՝ իր ընտանիքի անդամների պատվի և արժանապատվության ոտնահարման արդյունքում անձին պատճառված բարոյական վնասին: Պատվի և արժանապատվության ոտնահարումը և բարոյական վնասը նույնական չեն, հետևաբար բարոյական վնասի փոխհատուցման պահանջ անձը կարող է ներկայացնել միայն այն դեպքում, երբ այդտեղ նա ունի ինքնուրույն, անձնական շահ, որ պաշտպանության կարիք ունի: Բարոյական վնասն անհատական բնույթ ունի, քանի որ վնասի չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում տառապանքների աստիճանը՝ կապված անձի անհատական առանձնահատկությունների հետ: Այսինքն, բարոյական վնասի հատուցման պահանջի հնարավորությունը երրորդ անձանց կողմից պետք է բացառել:

¹ Տե՛ս <http://www.lawmix.ru/bux/45291/>:

² Տե՛ս Постановление Президиума Высшего арбитражного суда РФ от 1 декабря 1998 г. № 813/98:

³ Տե՛ս **Բարսեղյան Տ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս 1, 3-րդ հրատ, Երևան, 2006, էջ 118:

⁴ Տե՛ս **Белявский А., Придроворов Н.**, Охрана чести и достоинства личности в СССР, Москва, 1971, էջ 89:

Բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտի կարևորագույն, ակտուալ և ինստիտուտը կիրառող երկրների օրենսդրության կողմից գրեթե վերջնականապես չուճված ինդիք է համարվում փոխհատուցման չափի որոշումը: Բնականաբար, բարոյական վնասի չափը չի կարող հաշվարկվել այնպես, ինչպես գույքային վնասի դեպքում՝ արժեքի գնահատման միջոցով: ՌԴ օրենսդրությամբ՝ բարոյական վնասի փոխհատուցման չափը որոշվում է դատարանի կողմից՝ ողջամտության և արդարության սահմաններում՝ հաշվի առնելով պատճառված բարոյական և ֆիզիկական տառապանքները, վնաս պատճառողի մեղքի աստիճանը¹: Ընդ որում՝ տառապանքների բնույթը գնահատվում է՝ հաշվի առնելով վնաս պատճառելու փաստական հանգամանքները և տուժողի անհատական առանձնահատկությունները: Իրականում հստակ ամրագրված չափանիշների բացակայությունը մի կողմից ինդիքներ է առաջացնում դատարանների համար՝ դժվարություններ առաջացնելով չափերը որոշելու հարցում, մյուս կողմից էլ հիմք է հանդիսանում դատարանների կողմից պահանջում ներկայացված փոխհատուցման չափը անհարկի նվազեցնելու կամ մեծացնելու: Այդ է պատճառը, որ ՌԴ դատական պրակտիկայում գրանցվել են դեպքեր, երբ դատարանը նվազեցրել է հայցում ներկայացված պահանջի չափը 9 հազար անգամ²: Այսինքն, և՛ դատարանները, և՛ տուժողները չունեն վնասի չափը գնահատելու հստակ չափորոշիչներ: Դրանով իսկ այս ինստիտուտը կորցնում է իր նշանակությունն ու արդյունավետությունը, ուստի անհրաժեշտ է մշակել և ամրագրել փոխհատուցման չափի որոշման հստակ չափանիշներ: Գրականության մեջ առաջարկվում են տարբեր չափանիշներ, օրինակ՝ վնաս պատճառելու փաստական հանգամանքների հասարակական գնահատականը, առողջությանը վնաս պատճառելու դեպքում՝ վնասի աստիճանն ու բնույթը, առողջության քայքայման երկարատևությունը կամ կարճատևությունը, նույնիսկ՝ տեղական բարքերն ու սովորույթները և այլն³: Առաջ է քաշվում նաև տուժողի գույքային դրությունը հաշվի առնելը: Դա բացատրվում է նրանով, որ նյութապես ոչ բարվոք վիճակում գտնվող անձի համար, որպես բարոյական վնասի հատուցում, պետք է փոխհատուցվի ավելի քիչ գումար, քան նյութապես լավ ապահովված անձին, քանի որ առաջինի դեպքում թեկուզ քիչ գումարը կարող է փոխարինել նրա կրած տառապանքները, նույն ձևով և չափով երջանկացնել նրան, վերականգնել նախկին հոգեվիճակն այնպես, ինչպես առավել մեծ գումարը՝ երկրորդի համար: Սակայն այսպիսի մոտեցումն անընդունելի է և հակասում է իրավահավասարության ու արդարության սկզբունքներին: Ընդհակառակը, որպես չափանիշ կարելի է հաշվի առնել միայն մի կողմի՝ իրավունքները խախտողի գույքային դրությունը՝ նրա վրա բարոյական վնասի հատուցման պարտավորություն դնելիս: Առկա է նաև կարծիք այն մասին, որ անընդունելի է բարոյական վնասի փոխհատուցման չափը որոշելիս տուժողի անհատական առանձնահատկությունները հաշվի առնելը՝ հիմնավորելով, որ տուժող անձը փոխհատուցում պահանջելիս կարող է հիմնվել իր չափազանց զգայուն լինելու, մարմնի և տեսքի նկատմամբ չափազանց հոգատար լինելու և այլ հանգամանքների վրա, այնինչ փոխհատուցումը պետք է հավասար լինի՝ անկախ նրանից՝ կին է տուժողը, թե տղամարդ, զգայուն է, թե ոչ: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ անձի անհատական առանձնահատկությունները կարևոր չափանիշ են և պետք է ամրագրվեն, այլապես ուժեղ մարզիկին և նրբագեղ կնոջն արված ապտակի արդյունքում երկու կողմին էլ

¹ Որոշակի դեպքերում (օրինակ՝ ապօրինի կերպով դատապարտման կամ քրեական պատասխանատվության ենթարկվելու, պատվի, արժանապատվության ոտնահարման և այլն) մեղքի առկայությունը բարոյական վնասի հատուցման համար պարտադիր չէ:

² **Гаврилов Э.**, Как определить размер компенсации морального вреда, “Российская юстиция”, 2000, № 6, էջ 21:

³ Տե՛ս <http://bit.ly/1hWPaxj>:

կտրվի փոխհատուցում հավասար չափով, ինչն անարդար մոտեցում է: Եվրոպական երկրներում չափանիշների հարցը նույնպես հստակ կարգավորված չէ, և հարցի լուծման ողջ ծանրությունը դատարանների վրա է: Հայտնի են դատական գործեր, երբ դատարանն ավտովթարի արդյունքում ամուսնուն կորցրած կնոջը որպես բարոյական վնասի փոխհատուցում սահմանել է 6500 ֆունտ՝ նշելով, որ կինը գեղեցիկ է և համակրելի, 30 տարեկան է և կարող է նորից ամուսնանալ: Կամ մեկ այլ գործով Կ. Պետերսոնը, ով մեղադրվում էր Շվեդիայի վարչապետի սպանության մեջ և հետագայում դատարանի կողմից ճանաչվել էր անմեղ, պահանջել էր 2 մլն կրոն փոխհատուցում. արդյունքում հայցը բավարարվել է 300 հազ. կրոնի չափով՝ այն հիմնավորմամբ, որ անձը նախկինում դատապարտված է եղել, տվյալ պահին միայնակ թոշակառու է և ընտանիքի մասին հոգ տանելու կամ աշխատանք կորցնելու մասին անհանգստանալու կարիք չունի¹: Այսինքն, դատարանները նման գործեր քննելիս արդարացի վճիռներ կայացնելու նպատակով առաջնորդվում են տարբեր չափանիշներով:

Մեր կարծիքով՝ բարոյական վնասի հատուցման չափի որոշման հարցում անհրաժեշտ է ամրագրել հետևյալ պարտադիր չափորոշիչները, որոնք պետք է հաշվի առնվեն դատարանների կողմից՝ էլնելով գործի առանձնահատկություններից: Դրանք են.

ա) ֆիզիկական տառապանքների դեպքում՝ տուժողի առանձնահատկությունները (սեռ, տարիք), մարմնական վնասվածքի բնույթը, բուժման տևողությունը, հետևանքների տևողությունը,

բ) բարոյական տառապանքների, ապրումների դեպքում՝ առաջացած հոգեբանական հետևանքները, իր վիճակի ծանրության աստիճանը գիտակցելը, անձի առանձնահատկությունները, աշխատունակությունը վնասը կրելուց հետո,

գ) վնաս պատճառողի հետ կապված՝ նրա գույքային դրությունը, մեղքի աստիճանը:

Սրանք այն պարտադիր հանգամանքներն են, որոնք հաշվի առնելու, գնահատելու դեպքում միայն հնարավոր կլինի արդարության և ողջամտության սահմաններում որոշել բարոյական վնասի փոխհատուցման անհրաժեշտությունը, հիմքերը, չափը և արդարացի վճիռ կայացնել: Բնականաբար այս չափանիշները չեն կարող սպառնիչ լինել: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, էլնելով գործի առանձնահատկություններից և օրենքով ամրագրված չափանիշներից, դատարանները կվճակեն և կկիրառեն նոր չափանիշներ, որոնք էլ հետագայում հիմք կհանդիսանան դրանց օրենսդրական ամրագրման համար:

Շատ շուտով հայրենական իրավական համակարգը կլրացվի նոր իրավական ինստիտուտով, որով էլ հիմք կդրվի քաղաքացիաիրավական կարգավորման մի նոր փուլի: Այն կնպաստի իրավագիտակցության բարձրացմանը, նոր դատական պրակտիկայի ձևավորմանը, կարևոր դեր կստանձնի անձանց քաղաքացիական իրավունքների պաշտպանության գործում: Սակայն, ինչպես նշվեց, այս ինստիտուտը կարող է գործել և իրականացնել իր գործառույթները միայն այն դեպքում, երբ այն հնարավորինս զերծ կլինի թերություններից: Համակարգայնորեն հստակ կանոնակարգված լինելու համար պետք է ճիշտ ու արդյունավետ լուծում ստանան քննարկված խնդիրները:

¹ Шичанин А., էջ 89:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՓՈԽՉԱՏՈՒՅՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐՂՐՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

Բանալի բառեր՝ բարոյական վնասի ինստիտուտ, «բարոյական վնաս» հասկացություն, բարոյական վնասի փոխհատուցման սուբյեկտներ, իրավաբանական անձանց բարոյական վնաս, բարոյական վնասի չափ, բարոյական վնասի գնահատման չափանիշներ

Հոդվածում քննարկվում են բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտի որոշ հիմնախնդիրներ, որոնք այդ ինստիտուտի ներդրման և կիրառման համար անհրաժեշտ է լուծել: Վերլուծվում են արտասահմանյան երկրների օրենսդրությունը, իրավակիրառ պրակտիկայում առկա փորձն ու հիշյալ ինստիտուտի հիմնախնդիրների, վիճահարույց հարցերի տարբեր տեսակների լուծումներ: Քննարկվում է «բարոյական վնաս» հասկացության էությունն ու նշանակությունը, հիմնավորվում են գույքային բոլոր վնասների դեպքում բարոյական վնասի հատուցման անհրաժեշտությունը, իրավաբանական անձանց՝ որպես բարոյական վնասի փոխհատուցման սուբյեկտ ճանաչելը բացառող հանգամանքները, բարոյական վնասի չափի որոշման և գնահատման չափանիշների հիմնախնդիրները: Հոդվածի նպատակն է քննարկվող խնդիրների ճիշտ, արդյունավետ և ՀՀ իրավական համակարգին համապատասխան լուծման միջոցներ առաջարկելը, ինչից մեծապես կախված է հետագայում բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտի հստակ ներդրումն ու ճիշտ կիրառումը:

Тигран Дадунц

**НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ВНЕДРЕНИЯ ИНСТИТУТА КОМПЕНСАЦИИ
МОРАЛЬНОГО ВРЕДА**

Ключевые слова: институт морального вреда, понятие «моральный вред», субъекты компенсации морального вреда, моральный вред, нанесенный юридическому лицу, размер морального вреда и критерии его определения

В статье обсуждаются некоторые проблемы института компенсации морального вреда, решение которых необходимо при внедрении и использовании этого института. В статье проведен анализ законодательств и правовой практики ряда зарубежных стран и различных теоретических методов решения подобных проблем и спорных вопросов института. В частности, нами рассмотрены сущность и значение понятия морального вреда, обоснована необходимость его компенсации в результате нанесения всех видов материального ущерба и исключения компенсации морального вреда юридическому лицу. В статье также обсуждается проблема критерия определения размеров морального вреда. Цель данной статьи – найти решение обсуждаемых вопросов в соответствии с правовой системой Армении для полноценного внедрения и использования этого института.

Tigran Dadunts

**SOME PROBLEMS OF INTRODUCTION OF THE INSTITUTION OF MORAL
DAMAGE COMPENSATION**

Keywords: the institution of moral damage compensation, the concept of "moral damage", the subjects of compensation of moral damage, moral damage to corporate person, the rates of moral damage and its estimation criteria

The article is about some problems of the institution of moral damage compensation which must be solved while it is introduced and implemented. For this purpose the legislation and legal practice of foreign countries and also different theoretical solutions are analysed. The research presents the meaning of moral damage, grounds the necessity of compensation of moral harm in all cases of pecuniary damages and the impossibility of compensation for moral damages to corporate persons, introduces the problems of evaluation and rate estimation of moral damage. The aim of the research is to suggest exact and effective solutions of discussed problems appropriate to the legal system of Armenia which is very important for the proper introduction and application of this institution.